Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանի գործուղման արդյունքների մասին

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

  Գեղամ Վարդանյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

  Միացյալ Արաբական Էմիրություններ (ք. Աբու-Դաբի), 2019 թվականի փետրվարի 17-19-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄ**

  «IDEX» միջազգային ռազմական ցուցահանդես

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿ**

  Մասնակցություն «IDEX–2019» ցուցահանդեսին

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2019թ. փետրվարի 17-19-ը Աբու Դաբիում կայացավ «IDEX–2019»-ը Միջազգային պաշտպանության հարցերով համաժողովը և ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվում էր ցամաքային, ծովային և օդային ոլորտներում վերջին ռազմարդյունաբերական տեխնոլոգիաները:

«IDEX–2019»-ը անց էր կացվում Արաբական Միացյալ Էմիրությունների նախագահի, զինված ուժերի գերագույն հրամանատար շեյխ Խալիֆա բին Զայեդ Ալ Նահյանի հովանու ներքո և ԱՄԷ-ի զինված ուժերի լիակատար աջակցությամբ:

Հաշվի առնելով այն փաստը, որ Ռազմաարդյունաբերության ոլորտը կառավարության ծրագրի առաջնահերթություններից է, «IDEX–2019»-ի ցուցահանդեսին և հանդիպումներին

մասնակցել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը:

ՀՀ ՊՆ պատվիրակության հետ միասին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել աշխարհի տարբեր երկրների ռազմական և պաշտպանության ոլորտի առաջատարների հետ, որոնց ընթացքում քննարկվել է երկկողմ ռազմական համագործակցության զարգացման հեռանկարները, ոլորտի առջև ծառացած մարտահրավերները և հնարավոր լուծումները:

Ցուցահանդեսում ներկայացվել են ռազմաարդյունաբերական ոլորտի նորագույն տեխնոլոգիաներ, SS լուծումներ, սպառազինության նմուշներ, էլեկտրաօպտիկական սարքավորումներ, հատուկ գործողությունների իրականացման համար նախատեսված տեխնիկական միջոցներ և այլն:

Այս տարի ցուցահանդեսին իրենց արտադրանքն են ներկայացրել նաև ՀՀ ռազմարդյունաբերական ձեռնարկությունները, իսկ ՀՀ ՊՆ պատվո պահակախումբը և զինվորական նվագախումբը մասնակցել և ելույթ են ունեցել հանդիսավոր արարողություններին:

«IDEX–2019» ցուցահանդեսին մասնակցությունը հնարավորություն է ընձեռել ծանոթանալ և փոխգործակցել ոլորտում միջազգային արտադրողների հետ, ՀՀ ռազմարդյունաբերական արտադրանքը ներկայացնել, վաճառել և ծառայություններ մատուցել միջազգային շուկայում:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

«IDEX–2019» շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյանը հանդիպումներ է ունեցել մի շարք ընկերությունների ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում վերջիներիս իրենց հետաքրքրություններն են ներկայացրել տարբեր ուղղություններով:

- ST Engineering ընկերությունը հետաքրքրված է հայաստանյան մասնագետների և ընկերությունների հետ համագործակցությամբ՝ գիտատեխնիկական ոլորտում,
- Raki Industries կազմակերպությունը հետաքրքրված է օպտիկաէլեկտրոնային սարքերի ուղղությամբ՝ հնդկական շուկայում ներկայացնելու նպատակով

- NPCO National Pledges Trading ընկերությունը հետաքրքրված է ՀՀ ավիացիոն ռադիոէլեկտրոնային համակարգերի նորագույն լուծումներով և հայաստանյան արտադրության ռազմական հագուստի գնման ոլորտով՝ Սաուդյան Արաբիայի շուկայում ներկայացնելու նպատակով
- AMS ընկերությունը՝ ցանցային մոնիտորինգով (DPI տեխնոլոգիական միջոցներով)
- КБ ВИТА ընկերությունը՝ ջերմադիտարկման տեսախցիկների թեստավորման համակարգերով,
- Telecom International Company-ն հետաքրքված է հայստանյան ռազմական արտադրանքով՝ Եգիպոսի շուկայում ներկայացնելու նպատակով,
- National Defense Industrial Association Thailand հետաքրքրված է հայաստանյան արտադրության ռադիոզոնդերով,
- Bucklerordnance ընկերությունն իրականացնելով մեքենանաների արդիականացում՝ հետաքրքրված է ՀՀ նորագույն տեխնիկական լուծումներով և ապրանքներով (օպտոէլեկտրոնիկայով և ռադիոէլեկտրոնիկայով),
- Hegazy ընկերությունը՝ հայ արտադրողների կողմից ռազմարդյունաբերական արտադրանքով, մասնավորապես՝ ռադիոհաճախականությունների, օպտոէլեկտրոնային համակարգերով և ռադարներով՝ Եգիպտոսի շուկայում ներկայացնելու նպատակով,
- Emaan group-ը՝ օպտոէլեկտրոնային և ռադիացիոն համակարգերով՝ Սաուդյան Արաբիայի շուկայում կիրառելու նպատակով:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Ձեռք բերվեց կապեր՝ հետագա համագործակցության, ինչպես նաև մեր արտադրանքը միջազգային շուկայում ներկայացնելու և վաճառելու գծով:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարի տեղակալ՝

Գեղամ Վարդանյան

22.02.2019 թ.